



ՍՈՒՐԲ ՀԱՅՈՒԹ

Առաջնորդական Մազր Եկեղեցի

Յիսուսի Հրագերորդ Կրտսեր

24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Եջ 1
Նամակ Կաղանդ Պապային	Եջ 2
Ծանուցումներ	Եջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒԻ ԳԻՐՔԵՆ (40.18-31)

Որո՞ւ կը նմանցընէք զԱստուած
կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք:
Կուռքի՞։ Բայց ձուլագործն է որ կուռքը
կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիով կը
պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր
համար։ Նմանապէս հիւսնը անփուտ ծառի
կոճդ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամք
կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու։
Այնքան տգէ՞տ էք, չլսեցի՞ք կամ ձեզի
չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին,
որ երկրին հիմերը դրաւ։ Աստուծոյ մասին,
որ կը նստի երկրագունտէն ա՛յնքան
վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու
չափ կ'երեւին իրեն։ Ա՛ն է որ երկինքը
վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն
վրանի պէս կը կանգնէ իրեն համար։ Ինքն
է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի
դատարկները կ'ոչնչացնէ։ Բոյսի մը պէս
անոնք հազիւ տնկուած կամ ցանուած, եւ
տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ
անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը
զանոնք կը տանի յարդի պէս։

Արդ, «Որո՞ւ կը նմանցընէք զիս, ո՞վ
կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը,
Աստուած։ Երկինք բարձրացուցէք ձեր
աչքերը եւ դիտեցէք. ո՞վ ստեղծեց այս
բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք

իրենց անուններով կը ... Տիրոջ
կանչէ։ Այնքան մեծ է ապաւինող-
իր իշխանութիւնը եւ ները իրենց
սաստիկ՝ իր զօրութիւնը, որ
անոնցմէ որեւէ մէկը պիտի
դուրս չի գար իր խօսքէն։ Այսուհետու ինչո՞ւ կը տրտնջաս ուրեմն, ո՞վ Յակոբ, կամ
ինչո՞ւ կը մտածես, ո՞վ Խորացի, ըսելով. “Տէրը
իմ վիճակս չտեսաւ, իմ Աստուածս իրաւունքս մոռցաւ”։
Զե՞ս գիտեր, տակաւին չհասկցա՞ր թէ
յաւիտենական Աստուածն է ան, որ երկրի
սահմանները ստեղծեց. որ ո՛չ կը յոգնի
եւ ո՛չ կը թուլնայ, եւ անքննելի է անոր
իմաստութիւնը։ Ինքն է որ ոյժ կու տայ
յոգնածին, կը զօրացնէ տկարացածը։
Նոյնիսկ երիտասարդները պիտի յոգնին
ու թուլնան, եւ կտրիճները՝ յուսալքուին,
բայց Տիրոջ ապաւինողները իրենց ոյթերը
պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս
թեւ ու թոփչք ունենան. պիտի վագեն
առանց թուլնալու, պիտի քալեն առանց
յոգնելու։

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԵՆ (4.16-5.10)

Այսուհետեւ համարձակօրէն մօ-
տենանք Աստուծոյ աթոռին, ողոր-
մութիւն եւ շնորհք գտնելու համար,
որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշ-
տութեան պարագային։

Արդարեւ, ամէն քահանայապետ որ
մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն

ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ
յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց
մեղքերուն համար նուէրներ եւ զոհ
մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն
ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց
տգիտութիւնն ու փորձութիւնները եւ
կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն
տկարութիւնները ունի: Ատոր համար է,
որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր
սեփական մեղքերուն համար պէտք է զոհ
մատուցանէ:

Գիտէք նաեւ թէ ոեւէ մէկը չի' կրնար ինքն
իրեն քահանայապետութեան պատիւը
առնել, այլ Աստուծած է որ զայն այդ
պաշտօնին կը կանչէ, ճիշտ ինչպէս Ահարոն
կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն
իրեն չառաւ քահանայապետութեան
պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ,
որ իրեն ըստաւ. “Դուն իմ սիրելի Որդիս
ես, այսօր քեզ ծնայ”, իսկ ուրիշ տեղ մը
կ’ըսէ. “Դուն յաւիտեան քահանայ ես,
Մելքիսեդեկ քահանային պէս”:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս
մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց
եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք
մահուընէ փրկել: Եւ Աստուծած զինք
լսեց, որովհետեւ խոնարհ էր, բայց իր
չարչարանքներու փորձառութեամբ
սորվեցաւ թէ ի՞նչ բան է հնազանդութիւնը:
Եւ այսպէս կատարեալ ըլլալէ ետք,
յաւիտենական փրկութեան պատճառ
եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն
կը հնազանդին, քանի Աստուծած զինք
քահանայապետութեան կոչած էր, Մելքի-
սեդեկ քահանային պէս:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ Ա.ԻԵՏԱՐԱՆԻՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(18.9-14)**

Այս առակն ալ պատմեց անոնց,
որոնք կը պարծենային թէ արդար
են եւ ուրիշները կ’արհամարհէին: «Երկու
հոգիներ տաճար գացին աղօթելու.
մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր:

Փարիսեցին մէկ կողմ
կեցած, առանձին
կաղօթէր. “Աստուծած
իմ, շնորհակալ եմ քեզմէ՝
որ ուրիշ մարդոց նման
յափշտակող, անիրաւ,
շնացող չեմ, կամ այս
մաքսաւորին պէս ալ
չեմ: Այլ շաբաթը երկու
անգամ ծոմ կը պահեմ
եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին
կու տամ”: Իսկ մաքսաւորը մէկ կողմ
կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու
կուրծքը կը ծեծէր եւ կ’ըսէր. “Աստուծած,
ներէ մեղաւորիս մեղքերը”: Կ’ըսեմ ծեզի,-
եզրակացուց Յիսուս,- ո՛չ թէ փարիսեցին,
այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն.
որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝
պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը
խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«... ով որ
իր անձը կը
բարձրացնէ՝
պիտի
խոնարհի,
եւ ով որ
իր անձը կը
խոնարհեցնէ՝
պիտի
բարձրանայ»:

ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Մուշեղ Իշխան

Կաղանդ պապա,
իմ այս նամակս առաջին
Քեզ կը գրեմ ես ահա
եւ կարօտով կը յանձնեմ քու սուրբ աջին:
Ուր ալ ըլլաս,
Պիտի անշուշտ զայն կարդաս
եւ անհամբեր պիտի բոնես դուն կրկին
Մեր տան ծանօթ հին ուղին:
Քեզ չեմ մոռցած,
ինչպէս կրնամ մոռնալ քեզ.
Ամէն գիշեր, երբ քնանամ, դուն յանկարծ
Մօսս կուգաս եւ կը սարքես մեծ հանդէս,
իսկ ցերեկներն ալ թէեւ
կը հեռանաս մեր քովէն,
Կըլլաս երազ, կ’ըլլաս երկինք ու արեւ,
Բայց սրտաթունդ միշտ կը լսեմ ես նորէն

Քու ոտնաձայնդ հեռուէն...
 Պէտք է դուն ալ մեծ կարօտով զիս յիշես.
 Քանի՞ մանչուկ ինծի պէս
 Կրնաս գտնել դուն այսօր
 Քու փայփայած մանուկներուդ մէջ բոլոր...
 Մի հաւատար իմ մասին
 Թռչուններու բերած այդ սուտ լուրերուն,
 Ես տիպարն եմ ամէնուն,
 Հեզն ու բարին
 Եւ ամենէն արժանին՝
 Հրաշագան նուէրներուդ գոյնզգոյն...
 Յանուն փառքիդ անսահման
 Եւ փառաշուք մօրուքիդ՝
 Որքան ուղեն՝ լաւ խոստումներ կուտամ
միշտ
 Ծնողներուս սիրական.
 Լացող տղան
 Ես չեմ, պապիկ, այլ անպիտան սատանան,
 Որ կը վանեմ մէջէս դուրս
 Եւ կը դառնամ համակ ժպիտ, համակ լոյս:
 Մայրս կ'ըսէ որ այս տարի
 Քիչ մը հոգի եւ քիչ մը խելք ու շնորհ
 Բերես ինծի,
 Բայց չլսես դուն անոր.
 Խելք ու շնորհ՝
 Այնքա՞ն ունիմ որ կը բաշխեմ ես ձրի...
 Կողովիդ մէջ խորհրդաւոր
 Լեցուր չուտով ինձ համար
 Շաքար ու միրդ ու խաղալիք անհամար:
 Կաղանդ պապա,
 Որքան կրնաս շուտ եկուր,
 Ալ չեմ վախնար, ես կը սիրեմ քեզ հիմա.
 Դուն մի նայիր իմ բառերուս կցկտուր,
 Դէմքիս գոյնին ու քայլերուս դողահար:
 Զեռքդ վստահ մօտեցուր
 Իմ բոցավառ շրթներուն,
 Որքան ատեն զայն երկարես լեփ լեցուն՝
 Կը համբուրեմ անպատճառ,
 Նոյնիսկ կ'երգեմ քեզ համար
 Ու չեմ դպիր քու մօրուքիդ թելերուն...
 Երբ մեզի գաս եւ կաղանդի բերես տօն,
 Չըլլայ մոռնաս դուն նաեւ
 Մեր դրացի Տիգօն, Մարօն եւ Կարօն,
 Որոնք ունին շատ բարեւ

Եւ որոնց հետ ծեծ ու կոռուի բարեկամ՝
 Ես միասին կը խաղամ:
 Հայրս կ'ըսէ՝ Մասիսն է լոկ մեծ ընծան,
 Որ դուն օր մը կրնաս բերել հայ տղոց,
 Որուն մէջ կայ ամէն բան-
 Աստղ ու լուսին ոսկեզօծ,
 Կրակ ու բոց,
 Հսկայ շուներ պահապան,
 Շղթայակապ հին քաջեր
 Եւ հրեղէն նժոյգներ...
 Կաղանդ պապիկ, ես այդ Մասիսը կ'ուզեմ,
 Դիր անիւներ ոտքին տակ
 Ու համարձակ քշէ մեր տունը շիտակ,
 Բեր ինձ նուէրն այդ վսեմ:
 Օ մի վախնար, չեմ կոտրեր,
 Զայն կը պահեմ սրտիս դէմ՝
 Իբրեւ բարի հրեշտակ
 Եւ գահակալ իբրեւ հզօր բռնատէր:
 Կ'ըսեն որ դուն ամէն տարի Մասիսէն
 Կուզաս արդէն.
 Մազերդ ամբողջ բամպակ ու ձիւն են
դարձեր՝
 Իր ձիւներուն մէջ անհուն:
 Ափսոս որ շատ ես դուն ծեր,
 Բեռներու տակ, կորաքամակ, դողդոջուն.
 Ափսոս որ չես կրնար դուն
 Քալել արագ գայլիկներու նման վէս
 Եւ կ'ուշանաս միշտ այդպէս:
 Ինչո՞ւ սակայն ոտքով կ'երթաս տունէ
տուն
 Ու չես առներ ի վերջոյ
 Կամ օդանաւ, կամ օթօ:
 Աստուած պապա, Կաղանդ պապա, Տէր
պապա,
 Մերթ բացակայ, մերթ ներկայ,
 Մեր քովն էք դուք եւ ամպերուն մէջ
անհետ.
 Ես դեռ յաճախ կը շփոթեմ իրար հետ
 Զեր կերպարանքը հսկայ.
 Բայց մէջերնին դուն լաւագոյնն ես
կարծեմ,
 Առատաձեռն ու բարին,
 Ահա ինչու իմ այս նամակս առաջին
 Սիրով քեզի կը դրկեմ...

ԱՍՏՈՒԹԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՄԲԱԿՆԵՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» խմբակ

16-25 տարիքի երիտասարդներու
համար

Երկշաբաթական դրութեամբ
Կիրակի առաւօտեան՝
ժամը 9.45-10.45

«ՆԱՐԵԿ» խմբակ

26-40 տարիքի երիտասարդներու
համար

Երկշաբաթական դրութեամբ
Կիրակի առաւօտեան՝
ժամը 10.30-11.30

Հետաքրքրուողներէն կը խնդրուի
կապուիլ դիւանատուն՝

514 331 5445 կայան 202

ՏՆՕՐՀՆԵՔ

Տնօրինեք միամիաքող
լուտանիքները,

թող բարեհաճին դիմել

S. Գառնիկ Աւ. Զհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիվն:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԱՌԱՋՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐԻ
ՏԱՐԱԾԱԿՈՐՆԱՀԱՍ

ՇՆՈՐՉԱԿԱՐՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՈՒԽՆԴ
2018

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Յ

Ա Ս Ա Ն Ո Ր
Երկուշաբթի, 1 Յունուար 2018
ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Առաւօտեան ժամը 10:00-ին
ՍԿԻԶԲ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ
ժամը 11:00-ին

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Յ
Ուրբաթ, 5 Յունուար 2018
ՍԿԻԶԲ ԱՍՏՈՒԹԱՇՆՉԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒԽՄԵՐՈՒ
Երեկոյեան ժամը 5:30-ին
ապա
ժամը 6:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Տօն Ծննդեան
Յիսուս Քրիստոսի
Շաբաթ, 6 Յունուար 2018
ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Առաւօտեան ժամը 9:30-ին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Առաւօտեան ժամը 11:00-ին

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԲ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒԻ:
ԶԵԶԲ, ՄԵԶԲ ՄԵԾ ԱՒԵՏԻՒ:

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

ՀՈԳԵՇԱՆԳԻՒՍ
Յաւարտ Ս. և Անման Պատարագի

Կիրակի, 7 Յունուար 2018-ին
Սկիզբ Պատարագի՝ ժամը 11:00-ին
Սկիզբ Հոգեհանգիստի՝ ժամը 12:30-ին

ՏՆՕՐՀՆԵՔ

Տնօրինեք փափարող ընտանիքները
թող բարեհաճին դիմել Հովհանն
Տ. Գառնիկ Աւ. Զհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 909 5203 թիվն:

Սիրելի հայորդի,
Մեր Տիրոց Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան
և Աստուածայայտնութեան տօնին առիթով,
նուիրատուութեամբ (Խողագին) մասնակցէ
եկեղեցւոյ առաքելութեան:

Կանխայայտ Շնորհակալութեամբ՝
ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ